Արձանագրություն N 3

«ՍՄԿԲԿ-ԷԱՃԱՊՁԲ -18/27» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Կապան

«06» նոյեմբեր 2018թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝ Վիրաբ Մանասյան
հանձնաժողովի անդամներ՝ Նաիրա Հովհաննիսյան
Տաթևիկ Մովսիսյան
հանձնաժողովի քարտուղար՝ Սահականուշ Գրիգորյան

1"ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերի ներկայացման մասին

1. Ընդունել ի գիտություն.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04. 05. 2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել ընտրված մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Նատալի ֆարմ»ՍՊԸ-ն և «Արֆարմացիա»ՓԲԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

1.1. Մասնակիցները համակարգի միջոցով ներկայացրել են որակավորման փուլի փաստաթղթերը հրավերի պահանջներին համաձայն՝ հավելված 2 և հավելված 3:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

2"Գնահատող հանձնաժողովի անդամները ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը, որոշեցին հաստատել **«ՍՄԿԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/27»** ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները՝ «Նատալի ֆարմ»ՍՊԸ-ի և «Արֆարմացիա»ՓԲԸ-ի հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :

3. «ՍՄԿԲԿ-ԷԱՃԱՊՁԲ -18/27» ծածկագրով գնումների կատարման նպատակով հայտարարված ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

3"Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ **«ՍՄԿԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/27»** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից են հայտարարվում

№ 1; 3; 4; 5; 6; 8 և 10 չափաբաժինների համար «Նատալի ֆարմ»ՍՊԸ,
№ 7 և 9 չափաբաժինների համար «Արֆարմացիա»ՓԲԸ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :

4. Գնման պայմանագիր կնքելու որոշման մասին

4. Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը «Նատալի ֆարմ»ՍՊԸ-ին և «Արֆարմացիա»ՓԲԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

4.1. Հիմք ընդունելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը, անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Վիրաբ Մանասյան
Անդամ՝ ---------- Նաիրա Հովհաննիսյան
---------- Տաթևիկ Մովսիսյան
Քարտուղար՝ ---------- Սահականուշ Գրիգորյան